ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 24.11.2004

- Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ
- Գլուխ 2. Առեւտուր
- Գլուխ 3. Հանրային սննդի ծառայություն
- Գլուխ 4. Կենցաղային ծառայություն
- Գլուխ 5. Առեւտրի եւ ծառայությունների ոլորտում պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները
- Գլուխ 6. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար
- Գլուխ 7. Անցումային դրույթներ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակը եւ կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում առեւտրի, հանրային սննդի եւ կենցաղային ծառայությունների (այսուհետ՝ առեւտրի եւ ծառայությունների) ոլորտի պետական կառավարման հիմքերը, այդ ոլորտում պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները եւ ուղղված է առեւտրի եւ ծառայությունների ոլորտում իրականացվող գործունեության կանոնակարգմանը, ինչպես նաեւ սպառողների իրավունքների պաշտպանության ապահովմանը:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող առեւտրի եւ ծառայությունների գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ իրավական այլ ակտերով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ԳԼՈՒԽ 2.

ԱՌԵՎՏՈՒՐ

Հոդված 2. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքի իմաստով առեւտրի հիմնական հասկացություններն են՝

վաճառող՝ առուվաճառքի պայմանագրով սպառողներին ապրանք իրացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

աշխատող՝ վարձատրության դիմաց վաճառողի հետ կնքված աշխատանքային պայմանագրով աշխատող՝ անմիջականորեն վաճառք իրականացնող ֆիզիկական անձ.

առեւտրի օբյեկտ՝ գույքային համալիր (հողամաս, շենք, կառույց), որն օգտագործվում է ապրանքների առուվաճառքի համար.

սպառողական ապրանքների շուկա՝ առեւտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է սննդամթերքի եւ ոչ պարենային ապրանքների առուվաճառք.

ոչ պարենային ապրանքներ՝ բնակչության նյութական եւ կուլտուր-կենցաղային պահանջների բավարարման նպատակով վաճառքի համար նախատեսված կուլտուր- կենցաղային եւ տնտեսական նշանակության, թեթեւ արդյունաբերության եւ այլ արտադրանք.

արտադրատեխնիկական նշանակության ապրանքներ՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից օգտագործման նպատակով նախատեսված ապրանքներ, որոնք հիմնականում ներկայացվում են տեխնոլոգիական սարքավորումների, մեքենաների, վառելիքահումքային ապրանքների տեսքով.

գյուղատնտեսական արտադրանքի շուկա՝ առեւտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է կենդանական ծագում ունեցող մթերքի, բույսերի, բուսական արտադրանքի (այսուհետ՝ գյուղատնտեսական արտադրանք) եւ սննդամթերքի առուվաճառք.

կենդանիների շուկա՝ առեւտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է կենդանի կենդանիների առուվաճառք.

շրջիկ առեւտրի կետեր՝ ապրանքների պահման եւ մանրածախ առեւտրի համար համապատասխան սարքավորումներով ապահովված ավտոկրպակներ, մոտոկրպակներ, ավտոսայլակներ, մոտոսայլակներ, ավտոցիստեռններ եւ այլն.

հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկ գազի եւ սեղմված բնական գազի մանրածախ առեւտրի կետ՝ քաղաքաշինական նորմերին համապատասխան կառուցված, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկ գազի, սեղմված բնական գազի հաշվիչներ, կաշեփողեր, լցավորման ատրճանակներ, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների համար տեղադրված տարողություններ, օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներ, կշռաքարեր եւ չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներ ունեցող լցավորման կետեր.

առեւտրի իրականացման վայրի կազմակերպիչ՝ առեւտրի իրականացման վայրի աշխատանքը կազմակերպող, սույն օրենքով սահմանված պարտավորություններ կամ իրավունքներ ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

առեւտրի կենտրոն՝ առեւտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից որպես մեկ ամբողջություն տիրապետվող եւ կառավարվող առեւտրի օբյեկտների համախումբ, որտեղ նախատեսված են նաեւ հանրային սննդի, զվարճանքի, կենցաղային ծառայությունների համար առանձնացված մասեր.

ցուցահանդես-վաճառք՝ իրավաբանական անձի եւ (կամ) անհատ ձեռնարկատիրոջ կողմից իրենց սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալված տարածքում կամ իրավասու մարմնի կողմից սահմանված վայրում առուվաճառքի պայմանագրերի կնքման եւ տարածաշրջանային, միջտարածաշրջանային եւ միջպետական տնտեսական կապերի ձեւավորման նպատակով կազմակերպվող միջոցառում.

տոնավաճառ (վերնիսաժ)՝ հատկացված վայրում շաբաթ, կիրակի եւ օրենքով սահմանված տոնական օրերին կազմակերպվող շուկայական միջոցառում, որտեղ առուվաճառքնիրականացնում են իրավաբանական եւ ֆիզիկական անձինք:

Հոդված 3. Առեւտրի օբյեկտների եւ առեւտրի իրականացման վայրի տեսակները

1. Առեւտրի օբյեկտների տեսակներն են՝ խանութները, կրպակները, տաղավարները, շրջիկ առեւտրի կետերը եւ հեղուկ վառելիքի, հեղուկ գազի, սեղմված բնական գազի եւ տեխնիկական հեղուկների մանրածախ առեւտրի կետերը:

2. Առեւտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առեւտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) եւ ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերը:

Հոդված 4. Առեւտրի օբյեկտներին ներկայացվող պահանջները

1. Առեւտրի օբյեկտներում առուվաճառքն իրականացնում են միայն իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը:

2. Առեւտրի օբյեկտներում սննդամթերքի եւ ոչ պարենային ապրանքների, ինչպես նաեւ գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի՝ առանձին բաժիններում:

3. Ելնելով տվյալ առեւտրի օբյեկտի առանձնահատկություններից՝ առեւտրի օբյեկտը պետք է ապահովված լինի սույն օրենքով վաճառքի թույլատրված ապրանքների համար օրենսդրությանը համապատասխան՝ ընդունման, պահման եւ վաճառքիպայմաններնապահովող սարքավորումներով եւ առեւտրատեխնոլոգիական պարագաներով, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով, կշռաքարերով եւ չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով, պահեստային, վարչակենցաղային, ապրանքների վաճառքի նախապատրաստման համար անհրաժեշտ սենքերով:

4. Առեւտրի օբյեկտները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

5. Առեւտրի օբյեկտներում սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների ցուցադրումս առեւտրի օբյեկտից դուրս արգելվում է: Նշված ապրանքներ վաճառող առեւտրի օբյեկտների ցուցափեղկերը եւ մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված կամ մգավորված ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:

Հոդված 5. Առեւտրի իրականացման վայրերին ներկայացվող պահանջները

1. Առեւտրի իրականացման վայրերում առուվաճառքն իրականացնում են իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց թույլատրվում է առուվաճառք իրականացնել միայն գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, կենդանիների շուկաներում եւ տոնավաճառներում (վերնիսաժներում):

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց արգելվում է իրականացնել վաճառք սույն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ եւ 12-րդ մասերի, 14-րդ մասի «ա» եւ «բ» ենթակետերով նշված ապրանքների, ինչպես նաեւ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա սննդամթերքի:

3. Առեւտրի իրականացման վայրերում սննդամթերքի եւ ոչ պարենային ապրանքների, ինչպես նաեւ գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի տարանջատված մեկուսամասերում:

4. Առեւտրի կենտրոնները, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի եւ կենդանիների շուկաները պետք է ապահովված լինեն՝

ա) ձեռքի սայլակներով եւ մինչեւ ավտոկանգառ դրանց տեղաշարժն ապահովող ուղիներով.

բ) իրենց հատկացված հողատարածքի սահմաններում գործող ավտոկանգառով.

գ) կենցաղային հարմարություններով եւ սանիտարական հանգույցով:

5. Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում արգելվում է ոչ պարենային ապրանքների վաճառքը (բացառությամբ վաճառքի համար անհրաժեշտ փաթեթավորման եւ տարայավորման ապրանքների):

Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում արգելվում է կենդանի կենդանիների վաճառքը:

6. Գյուղատնտեսական արտադրանքի շուկաների տարածքում գործող առեւտրի օբյեկտների գործունեության վրա չեն տարածվում սույն հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Նշված առեւտրի օբյեկտներում արգելվում է վաճառել սույն օրենքի 9-րդ հոդվածի 12-րդ մասում նշված ապրանքները:

7. Սպառողական ապրանքների շուկաներում արգելվում է գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը:

8. Սպառողական ապրանքների շուկաների տարածքում գործող առեւտրի օբյեկտների գործունեության վրա չեն տարածվում սույն հոդվածի 7-րդ մասի պահանջները:

9. Առեւտրի իրականացման վայրը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

Հոդված 6. Վաճառողին ներկայացվող պահանջները

1. Վաճառողը պարտավոր է ապահովել՝

ա) սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերով, ինչպես նաեւ 5-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դրույթների պահանջների կատարումը.

բ) յուրաքանչյուր աշխատողին՝ իր ստորագրությամբ եւ կնիքով հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան եւ պաշտոնի նշմամբ:

Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան եւ անհատ ձեռնարկատիրոջ վկայականի համարի նշմամբ:

Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը.

գ) սպառողի (գնորդի) հետ դրամական հաշվարկները հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով իրականացնելու դեպքում վաճառված ապրանքի հետ սպառողին (գնորդին) դրամարկղային չեկի, իսկ առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների իրականացնելու դեպքում՝ ապրանքի գնի վճարումը հաստատող, վաճառողի կողմից հաստատված ձեւի, փաստաթղթի տրամադրումը.

դ) ապրանքը վաճառքի հանելուց առաջ առաջարկվող ապրանքի որակի ստուգումն ըստ արտաքին հատկանիշների.

ե) սննդամթերքի վաճառքով զբաղվող առեւտրի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստի կրումը:

2. Մատակարարման պայմանագրով ապրանքների առուվաճառք (մեծածախ առեւտուր) իրականացնելիս վաճառողը (մատակարարը) պարտավոր է իր կողմից բաց թողնված ապրանքի հետ գնորդին (պատվիրատուին) տրամադրել՝

ա) օրենքով սահմանված կարգով լրացված հաշվարկային փաստաթուղթ.

բ) օրենքով սահմանված դեպքերում վաճառվող ապրանքների համապատասխանության հավաստագրեր:

3. Առեւտրի օբյեկտներում եւ առեւտրի իրականացման տվյալ վայրում վաճառողի (մատակարարի) կողմից մատակարարման պայմանագրով ապրանքների առուվաճառք (մեծածախ առեւտուր) կատարելու դեպքում այդ մասին ցուցանակի վրա պետք է զետեղվի համապատասխան տեղեկատվություն:

Հոդված 7. Առեւտրի իրականացման վայրի կազմակերպչին ներկայացվող պահանջները

1. Առեւտրի իրականացման վայրի կազմակերպիչը պարտավոր է ապահովել՝

ա) սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ եւ 9-րդ մասերով նախատեսված դրույթների պահանջների կատարումը.

բ) վաճառողներին (բացառությամբ առեւտրի իրականացման վայրի տարածքում գործող առեւտրի օբյեկտների) եւ իր աշխատողներին, օրենսդրությանը համապատասխան, առեւտրատեխնոլոգիական սարքավորումներով, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով, կշռաքարերով եւ չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով, ինչպես նաեւ տվյալ առեւտրական գործունեությունն իրականացնելու համար նախատեսված այլ գույքով:

2. Գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կազմակերպիչը վաճառքի ընդունվող՝ փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով ապահովում է գյուղատնտեսական արտադրանքի շուկայում համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիա:

3. Առեւտրի իրականացման վայրի կազմակերպիչը վաճառատեղերը վճարովի կամ անհատույց օգտագործման նպատակով տրամադրում է վաճառողներին՝ նրանց հետ օրենքով սահմանված կարգով կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա, բացառությամբ 5-րդ հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաեւ անմիջապես կազմակերպչի կողմից վաճառքն իրականացնելու դեպքերի:

Գյուղատնտեսական արտադրանքի եւ կենդանիների շուկաներում ու տոնավաճառներում (վերնիսաժներում) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց վաճառատեղերը տրամադրվում են նրանց անձնագրի հիման վրա:

Առանց պայմանագրերի կնքման, առեւտրի իրականացման վայրերում, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությունում նախատեսված դեպքերի, առուվաճառք իրականացնելն արգելվում է:

Հոդված 8. Աշխատողին ներկայացվող պահանջները

1. Աշխատողը պարտավոր է՝

ա) վաճառքի հանելուց առաջ ստուգել ապրանքի որակն ըստ արտաքին հատկանիշների, դրանց պիտակների եւ գնապիտակների առկայությունը եւ գնորդին վաճառել օգտագործման նշանակությանը համապատասխանող ապրանք.

բ) իրազեկ լինել վաճառքում առկա ապրանքները բնութագրող հիմնական հատկություններին եւ անհրաժեշտության դեպքում սպառողին (գնորդին) տալ ստույգ եւ հավաստի տեղեկատվություն:

Հոդված 9. Առեւտրի կազմակերպման կանոնները

1. Առեւտրի օբյեկտներում առուվաճառքն իրականացվում է օրենքով սահմանվածտեսակներով:

2. Մանրածախ առեւտուրն իրականացվում է խանութներում, կրպակներում, տաղավարներում, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկ գազի եւ սեղմված բնական գազի առեւտրի կետերում, առեւտրի կենտրոններում, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի եւ կենդանիների շուկաներում, տոնավաճառներում (վերնիսաժներում), ցուցահանդես-վաճառքի կազմակերպման վայրերում, շրջիկ առեւտրի կետերի միջոցով ու ավտոմատներով, ինչպես նաեւ էլեկտրոնային կապի միջոցով:

3. Վաճառքի ցուցադրված յուրաքանչյուր ապրանքանմուշ պետք է ունենա պիտակ, իսկ ապրանքատեսակը՝ նաեւ գնապիտակ:

4. Սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի եւ կենդանիների շուկաներում, տոնավաճառներում (վերնիսաժներում) եւ ցուցահանդես-վաճառքի կազմակերպման վայրերում վաճառվող կամ վաճառքի ցուցադրվող ապրանքների համար գնապիտակի առկայությունը պարտադիր չէ (բացառությամբ նշված վայրերում գործող առեւտրի օբյեկտների) :

5. Գնված պատշաճ եւ ոչ պատշաճ որակի ապրանքների փոխարինումը կամ դրանց համար վճարված գումարի վերադարձումը եւ վերահաշվարկն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

6. Շրջիկ առեւտրի կետերով վաճառք կատարելիս պետք է ստեղծվեն պայմաններ՝ ապահովելու վաճառվող ապրանքների ապրանքային տեսքը, անվտանգությունը եւ որակը:

Վաճառարկղերը պետք է դրվեն տակդիրների վրա, արգելվում է վաճառարկղերը դնել անմիջապես գետնին, մայթին, սալահատակին:

Տեղում սպառելու համար (այդ թվում՝ միանգամյա օգտագործման տարաներով) սննդամթերք վաճառելիս շրջիկ առեւտրի կետերը պետք է ունենան տարաները, անձեռոցիկները հավաքելու տարողություններ (աղբարկղեր):

7. Վաճառողի կողմից սննդամթերքի կշռափաթեթավորում կատարելիս, ելնելով տվյալ ապրանքատեսակի առանձնահատկությունից, փաթեթավորման համար օգտագործվում են հիգիենիկ եւ հակահամաճարակային ծառայության կողմից թույլատրված նյութերից պատրաստված փաթեթավորման միջոցներ: Փաթեթավորվող սննդամթերքի փաթեթի կամ մեջդիր պիտակների վրա նշվում են ապրանքի անվանումը, տեսակը, քաշը (նետտո), մեկ կիլոգրամի եւ կշռափաթեթավորված քաշի վաճառքի գինը, փաթեթավորման օրը, նաեւ պիտանիության ժամկետը:

8. Ցուցահանդես-վաճառքները կազմակերպվում եւ անցկացվում են իրավաբանական անձանց եւ (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից:

Ցուցահանդես-վաճառքներում ապրանքների առուվաճառքն իրականացվում է նաեւ նմուշներով, կատալոգներով, ուրվանկարներով, տեղեկագրերով եւ էլեկտրոնային տեղեկատվության միջոցներով:

9. Տոնավաճառները (վերնիսաժները) կազմակերպում են տեղական ինքնակառավարման մարմինները, օրենսդրությամբ սահմանված կարգով, միայն շաբաթ, կիրակի եւ օրենքով սահմանված տոնական օրերին: